«Քայլ առ քայլ»

բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ինտեգրված պարապմունքների կազմակերպումը՝ կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում

Դաստիարակ՝ Մարինե Կիրակոսյան

Մանկապարտեզ՝ «Ավան մ/մ» ՀՈԱԿ թիվ 56 մ/մ

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... 3

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԻՆՏԵԳՐՎԱԾ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.1. Ինտեգրված ուսուցման էությունը..... 5

1.2. Ժամանակակից ինտեգրված պարապմունքներին ներկայացվում են հետևյալ պահանջները 8

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ.....11

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....17

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նախադպրոցական հաստատություններում ուսուցման ժամանակակից նորարարական մեթոդներից մեկը ինտեգրված պարապմունքներն են, որոնք հանդիսանում են կրթության շարունակական բարեփոխումների համակարգում մեթոդաբանական միանգամայն նոր մոտեցում: Միջգիտակարգային գիտելիքների վրա հիմնված ինտեգրված պարապմունքներն, ըստ էության, միջառարկայական կապեր ապահովող ուսուցողական պարապմունքի օրինակ են: Երեխաների ճանաչողական գործունեությունը ակտիվացնելու բազմազան միջոցների կիրառմամբ՝ ինտեգրված ուսուցումը նպատակ ունի ամբողջական և համակողմանի գիտելիքներ ձևավորել շրջակա աշխարհի տարբեր երևույթների վերաբերյալ:

Դեռևս անցյալ դարի 70-ական թթ մանկավարժական գիտամեթոդաբական հետազոտություններում առանձնահատուկ նշանակություն տրվեց երեխայի մտավոր, ֆիզիկական, սոցիալական և հուզաարժեքային համակարգի համակողմանի զարգացմանը, էկոլոգիական և գեղագիտական դաստիարակությանը: Խնդիրը ենթադրում էր նախադպրոցական տարիքի երեխաների կրթության և տարբերակված ուսուցման գործընթացում ուսուցման գործունեության մի քանի տեսակների միավորում, միջառարկայական կապերի ապահովում, ինտեգրատիվ մոտեցման կիրառում և պարապմունքների համապատասխան ձևերի կազմակերպում: Այս ուղղությամբ ծանրակշիռ գիտական հետազոտություններ են կատարել Վ. Կրաևսկին, Ն. Տալիզինան, Գ. Ֆեդորեցը, Ա Գոգոբերիձեն, Օ Սոլնցևան և ուրիշներ, ովքեր ուսուցման կազմակերպման մեջ առավելագույնս կարևորել են ինտեգրման սկզբունքն ու ինտեգրված պարապմունքի դերը:

Հետազոտական աշխատանքի **նպատակը** նախադպրոցական հաստատություններում կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում ինտեգրված ուսուցման և պարապմունքների նշանակության գնահատումն ու կազմակերպման եղանակների վերլուծությունն է:

Թեմայի ընտրությունը պայմանավորված է քննարկվող հիմնախնդրի արդիականությամբ և երեխաների համակողմանի զարգացման գործընթացում ինտեգրված պարապմունքների արդյունավետությամբ: Աշխատանքի կատարման

արդյունքում ակնկալում ենք հիմնավորել ինտեգրված ուսուցման և պարապմունքների կազմակերպման անհրաժեշտությունը նախ երեխաների մոտ միջառարկայական ինտեգրված գիտելիքներ և հմտություններ, ապա նաև՝ գործնականում դրանք կիրառելու կարողություններ ձևավորելու գործում:

Հետազոտական աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, երկու ենթագլխից, պարապմունքի պլանավորումից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից.

ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ԻՆՏԵԳՐՎԱԾ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.1. Ինտեգրված ուսուցման էությունը:

Նախադպրոցական ուսումնական հաստատություններում ուսուցման հիմնական ձևը ուսուցողական և դաստիարակչական բնույթի պարապմունքներն են: Նախադպրոցականի համակողմանի և ներդաշնակ զարգացման գործում մեծ է հատկապես ինտեգրված ուսուցման դերը, որը նպաստում է երեխաների կողմից շրջապատող աշխարհի երևույթների և առարկաների առավել խորը, բազմակողմանի ընկալմանը, դրանց միջև կապերի բացահայտմանը:

«Ինտեգրում» (Integr-ամբողջ)- լատիներենից թարգմանաբար նշանակում է՝ վերա-կանգնում, համալրում, մասերի միավորում մեկ ամբողջի մեջ:

Ինտեգրված պարապմունքները հնարավորություն են տալիս ձևավորելու հստակ պատկերացումներ ուսուցանվող նյութի մասին, արթնացնում են հետաքրքրություն ուսուցանվող երևույթի նկատմամբ: Ինտեգրված պարապմունքի համար կարևոր է նյութի ընտրությունը, ուսումնական միջոցների բազմազանությունը, արդյունավետ մեթոդների ընտրությունը, ինչպես նաև ինտեգրված պարապմունքն անցկացնող դաստիարակների պատրաստվածությունը, հոգեբանական համատեղելիությունը:

Ինտեգրված պարապմունքներն ապահովում են երեխայի մտավոր, սոցիալական, հուզական, ֆիզիկական և գեղագիտական ոլորտների համակողմանի զարգացումը: Ինտեգրված պարապմուքնները կարևորում են գործունեության այն ձևերը որոնք պահանջում են ինքնուրույն մտածողություն, նախաձեռնողականություն, համագործակցություն, հնարամտություն, անձնական կարգապահություն, շրջապատում կատարվող փոփոխությունների ճիշտ ընկալում:

Ինտեգրված ուսուցումը ենթադրում է գիտելիքի տարբեր բնագավառների միջև կապերի ստեղծում: Երեխաներին առաջարկվում են հետաքրքրիր թեմաներ կենսական հարցերի շուրջ: Ուսումնասիրվող թեմայի մեջ երեխաների հետաքրքրություններին կենտրոնական տեղ հատկացնելով՝ ապահովվում է երեխաների շահագրգռվածությունն ու հետաքրքրասիրությունը թեմայի նկատմամբ:

Դաստիարակը ինտեգրված պարապմունքին նախապատրաստվելիս, ըստ Հ. Միտոյանի և Լ. Սմբատյանի պետք է հաշվի է առնի [5].

- արդյոք թեման համապատասխանում է երեխաների հետաքրքրություններին,
- նպաստում է երևակայության և ստեղծագործական մտքի խթանմանը,
- հնարավո՞ր է արդյոք ընտրված թեման անցնել այնպես, որ ապահովվի բոլոր երեխաների մասնակցությունը և միաժամանակ յուրաքանչյուր երեխայի գործադրած ջանքը պսակվի հաջողությամբ,
- երեխաները հնարավորություն ունենան համագործակցելու և որոշակի պատասխասխանատվություն կրելու,
- երեխաները կարողանան ավելացնել իրենց գիտելիքներն ու փորձը՝ միջավայրի, առարկաների, մարդկանց և իրենց շրջապատում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ:

Երեխաների ճանաչողական հետաքրքրությունների ձևավորման, ինչպես նաև ճանաչողական գործունեության ակտիվացման նպատակով, ինտեգրված պարապմունքների ընթացքում կիրառվում են տարբեր մեթոդներ, դաստիարակը օգտվում է նաև տարբեր միջոցներից: Ուսուցման կազմակերպման ավանդական ձևերը պարբերաբար մշակվում և կատարելագործվում են: Փորձը ցույց է տալիս (Գ. Ֆեդորեց), որ փոխներգործուն մեթոդների կիրառումը նախադպրոցական տարիքի երեխաների համար պարապմունքները դարձնում է հաճելի, զվարճալի և արդյունավետ՝ հատկապես, եթե դրանք անցկացվում են կերպարվեստային միջոցների ու երաժշտության զուգակցությամբ: Այստեղ կարևոր է նաև այն, որ ուսուցման գործընթացին մասնակցում են տվյալ տարիքային խմբի բոլոր երեխաները: Նման գործունեության ընթացքում ակտիվորեն զարգանում են երեխայի հոգեկան գործընթացները: Նրանք սովորում են համագործակցել հասակակիցների հետ, բարձրանում է երեխայի ինքնագնահատականը, հնարավորություն է ստեղծում ճանաչողական գործընթացը դարձնել իսկապես հագեցված: Դա օգնում երեխաներին՝ բացահայտելու իրենց ուժեղ կողմերը, ստեղծագործական ունակությունները, բավարարելու հետքրքրությունները: Նման պարապմունքները կարող են անցկացվել ինչպես ենթախմբերով , այնպես էլ

ամբողջ խմբի հետ՝ ըստ պարապմունքի նպատակի, տեսակի և ուսումնական նյութի: Կարևորվում են պարապմունքների տեղի և ժամանակի ընտրությունը, դրանց անցկացման ձևերը, ուսումնական զարգացնող միջավայրը; Դրանք օգնում են երեխաներին՝ այս կամ այն գործունեության ընթացքում առավելագույնս տրամադրվելու դաստիարակի կողմից առաջադրվող նյութի ընկալմանը: Եթե պարապմունքը պահանջում է նախատեսված գիտելիքների հաղորդում կամ երեխաների յուրացրածի համակարգում, և դաստիարակը դեռևս լավ չի տիրապետում նոր մեթոդների, ապա այն կարող է անցկացվել ավանդական ձևով: Աստիճանաբար հմտանալով՝ դաստիարակը կարող է առավել ակտիվ օգտագործել դրանք, որպես ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունավետ ձև: Ուսուցման ընթացքում դաստիարակը հաշվի է առնում երեխաների անահատական տվյալները. Այսինքն՝ յուրաքանչյուր երեխա հնարավորություն է ստանում ուսուցվող նյութը յուրացնել ըստ իր հոգեկան զարգացման, խանվածքի և ընկալման կարողությունների:

Ինտեգրված պարապմունքները հնարավորություն են տալիս կիրառելու ուսուցման ինտերակտիվ մեթոդներ, աշխատելով փոքր խմբերով, համագործակցելով հասակակիցների հետ, յուրաքանչյուր երեխա օգտվում է բավականին շահեկան և բարենպաստ պայմաններում: Այսպես՝

- Համագործակցելով հասակակիցների հետ, նա ավելի արագ է ինտեգրվում,
- Նույն ժամանակահատվածում խմբի բոլոր երեխաները զբաղված են,
- Համագործակցության ընթացքում բարձրանում է երեխայի ինքնագնահատականը,
- Երեխան հնարավորություն է ունենում ազատ ինքնաարտահայտվելու;
- Ակտիվ աշխատում և զարգանում են թե օժտված երեխաները, թե թույլկարողություն, թեառանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները,
- Երեխան հնարավորություն է ստանում սովորել սեփական սխալների վրա,
- Ուսուցումը վեր է ածվում հաճելի համագործակցության:

Պարապմունքի ընթացքում կազմակերպվում է անհատական, խմբային, զույգերով աշխատանք, կիրառվում են հետազոտական, դերային խաղեր, ստեղծագործական գործունեություն և այլն:

1.2. Ժամանակակից ինտեգրված պարապմունքներին ներկայացվում են հետևյալ պահանջները

Ժամանակակից ինտեգրված պարապմունքներին ներկայացվում են հետևյալ պահանջները.

- Նոր մեթոդների կիրառում,
- Փոխազդեցություն, փոխուսուցում,
- Երեխայի ակտիվություն,
- Համագործակցություն
- Ինքնաարտահայտման խրախուսում
- Հետադարձ կապ և այլն:

Պարապմունքի ձևի ընտրությունը, ըստ մեթոդների, որոշում է դաստիարակը՝ ծրագրով նախատեսված թեմային համապատասխան: Եթե տվյալ թեման կարելի է մատուցել խաղի, խաղ-պարապմունքների, էքսկուրսիաների կամ ինտեգրված պարապմուննքերի ձևով, ապա դաստիարակն այդ ընտրությունը ամրագրում է պլանավորման մեջ: Այն չի կարող ինքնանպատակ լինել կամ կամայական բնույթ կրել այլ պայմանավորված է՝

- Ուսուցման նպատակներով և խնդիրներով,
- Ուսուցվող նյութի բովանդակությամբ, ծավալով և բարդությամբ,
- Երխաների պատրաստվածության մակարդակով
- Տարիքային առանձնահատկություններով,
- Երեխաների թվաքանակով,
- Դաստիարակի պատրաստվածության մակարդակով:

Ուսուցման ինտերակտիվ մեթոդների կիրառման պայմաններն են.

- Աշխատանքում պետք է ներգրավված լինեն բոլոր երեխաները,
- Եթե տվյալ տարիքային խումբը մեծաքանակ է , ապա արդյունավետ է
- աշխատանքը կազմակերպել փոքր խմբերով:

- Փոքր խմբերով աշխատանքի դեպքում բոլորը պետք է արտահաղտվելու հնարավորություն ունենան, յուրաքանչյուր ենթախումբ ն երկայացնելու է խնդրի վերաբերյալ իր տեսակետը:
- Հարկավոր է խմբասենյակը նախապատրաստել այնպես, որպեսզի երեխաները հեշտությամբ աշխատեն մեծ և փոքր խմբերով:Ցանկալի է , որ նստելու դիրքը և ափոռների դասավորությունը նպաստեն դրան: Աշխատանքի համար անհրաժեշտ նյութերը պետք է պատրաստել նախապես:

Ինտեգրված պարապմունքները կարող են ծառայել նաև որպես ամփոփիչ պարապմունք, որի ընթացքում դաստիարակը կկիրառի նոր մեթոդներ: Ավելի հաճախ դրանք անհրաժեշտ է օգտագործել, որպես ամենօրյա պարապմունքներ, որոնք ամենևին կարիք չունեն նախապես երեխաներին նախապատրաստելու: Նման պարապմունքները արդյունավետ անցկացնելու համար անհրաժեշտ է միայն պլանավորել պարապմունքի ամբողջ ընթացքը, հստակ ձևակերպել նպատակները, նախապատրաստել անհրաժեշտ նյութերը ըստ ենթախմբերի: Այսպիսի պարապմունքների ընթացքում երեխաներն աստիճանաբար սովորում են ինքնուրույն աշխատել և այդ կերպ ձևավորվում են հետազոտական հմտություններ և կարողություններ: Նրանք սովորում են համարձակ արտահայտել իրենց կարծիքները այս կամ այն հարցի շուրջ: Կարողանում են ամփոփել իրենց սովորածը և իմացածը՝ ընտրած թեմայի շրջանակում: Կատարում են համեմատություններ և գտնում տարբերությունները, ազատ և անկաշկանդ երևակայությամբ ստեղծագործում են և ներկայացնում իրենց կատարած աշխատանքները: Սովորում են կարծիք հայտնել ընկերոջ կատարած աշխատանքի վերաբերյալ:

Ինտեգրված պարապմունքները նպատակաուղղված են առարկաների կամ երևույթների համակողմանի ուսումնասիրմանը, գիտելիքների համակարգվածությանը, ստեղծագործական երևակայության զարգացմանը: Ընդ որում ինտեգրված ուսուցման արդյունավետությունը բարձրացնում են ոչ թե մեխանիկորեն սերտած տեղեկությունները, այլ՝ միջառարկայական կապերի օգտագործման մեթոդական եղանակով ձևավորվող ամբողջական գիտելիքներով և դրանք կյանքում կիրառելու կարողություններով:

Ըստ մի շարք հեղինակ-տեսաբանների, մասնավորապես՝ Ն. Տալիզինայի [2], Ա. Գոգոբերիձեի և Օ. Սոլնցևայի [4], ինտեգրված ուսուցման անհրաժեշտությունը պայմանավորված է երեխաների կողմից շրջապատող աշխարհն ավելի ամբողջական ընկալելու, առանձին երևույթների և առարկաների պատճառահետևանքային կապերը տեսնելու, հասկանալու և եզրահանգումներ կատարելու անհրաժեշտությամբ:

Ինտեգրված պարապմունքների անցկացման ձևաչափը հետաքրքիր է, յուրահատուկ և ուսանելի: Դրանց ընթացքում դաստիարակին հնարավորություն է ընձեռնվում ներկայացնել առարկայական տարբեր ոլորտների և կյանքի միջև գոյություն ունեցող կապը, թոթափել երեխաների հոգնածությունը, լարվածությունը, և էապես մեծացնելով ճանաչողական հետաքրքրությունը՝ նպաստել երևակայության, ուշադրության, խոսքի և հիշողության զարգացմանը: Հասարակության զարգացման արդի ժամանակաշրջանում ուսուցումն ընկալվում է որպես անձի աշխարհաճանացողությունն ու գիտակցությունը ձևավորելու և զարգացնելու հատուկ կազմակերպված գործընթաց, որում գիտելիքների ինտեգրմանը միտված ուսուցումը միջառարկայական կապերի միջոցով կերտում է շրջակա աշխարհի ամբողջականության ու միասնականության պատկեր:

Ինտեգրված ուսուցումն ու համապատասխան պարապմունքների կազմակերպումը նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակին ստեղծագործելու հնարավորություն է ընձեռում: Այս առումով, հայտնի տեսաբան-մանկավարժ Գ Ֆեդորեցը [3] մանկապարտեզում ինտեգրված ուսուցումը համարելով միջառարկայական կապերի վրա հիմնված պարապմունքների հատուկ նպատակային տեսակ՝ նշում է, որ այն ենթադրելով ինտեգրիչ առարկայի առանձնացում և դրան աջակցող, լրացնող մեկ կամ մի քանի առարկաների համադրում պահանջում է դաստիարակից ստեղծագործական մոտեցում՝ դրանով իսկ նպաստելով նյութի խորացմանը, ընդլայնմանն ու հստակեցմանը:

Ինտեգրված պարապմունքներ կազմակերպելիս կարելի է միավորել ինչպես տարբեր առարկաներ ողջ ծավալով, այնպես էլ առանձին առարկաների բաղադրիչներ և մեթոդներ:

Այսպես, մեր կողմից կատարված հետազոտական աշխատանքում որպես ինտեգրիչ ընտրվել է «Ծանոթացում շրջապատին» առարկան և այն համադրել ֆիզիկական դաստիարակության հետ՝ փորձելով ստեղծել միջառարկայական կապի նպատակային տարբերակ:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Պարապմունքի կազմակերպում: Նախադպրոցական ուսումնական հաստատություններում երեխաների կրթադաստիարակության գործընթացի կարևոր բաղադրամասերից մեկը ուսուցողական պարապմունքներն են: Դրանց ընթացքում երեխաները ձեռք են բերում որոշակի գիտելիքներ և հմտություններ, որոնք այնուհետև ավելի խորը յուրացվում և ամրապնդվում են տարբեր խաղերի, մեծերի և հասակակիցների հետ ամենօրյա հաղորդակցման և ինքնուրույն գործունեության ընթացքում:

Ուսուցողական պարապմունքներն իրենց բովանդակությամբ և կազմակերպման ձևով չպետք է առանձնացվեն և շատ տարբերվեն մյուս աշխատանքներից, որոնք իրականացվում են երեխաների հետ օրվա տարբեր ժամերին: Պարապմունքները պետք է ներառվեն օրվա աշխատանքներում այնպես, որ անցումը պարապմունքից երեխայի գործունեության մյուս ձևերին լինի բնականոն, տրամաբանական, սահուն և հիմնավորված: Անհարժեշտ է հիշել, որ օրվա ընթացքում երեխաների հետ տարվող բոլոր աշխատանքները՝ անկախ դրանց բնույթից, հավասարաչափ կարևոր են և իրենց դերն ունեն երեխայի համակողմանի զարգացման գործում:

Ուսուցողական պարապմունքները տարվում են երկու ձևով՝ համընդհանուր (ճակատային) ուսուցման, որը հիմնականում կատարվում է նոր նյութի հաղորդման ժամանակ և մի քանի թեմատիկ պարապմունքների ինտեգրման եղանակով:

Մինչ «Ճանապարհորդություն դեպի կենդանաբանական այգի» թեմայով մեր կողմից կազմակերպված ինտեգրված ուսուցողական օրինակելի պարապմունքի իրականացումը, կատարել ենք մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագրով նախատեսված նախապատրաստական թեմատիկ պարապմունքներ: Դրանք կատարվել են համընդհանուր ուսուցման եղանակով, ունեցել են թեմատիկ հստակ բովանդակություն՝ «Ընտանի և վայրի կենդանիներ», «Ընտանի և վայրի թռչուններ» և ամրապնդվել գործնական աշխատանքների միջոցով:

Թեմաների զարգացումը, նյութի ամրապնդումը, ամփոփումը կատարելու նպատակով՝ կիրառել ենք ուսուցման փոխգործուն մեթոդները, օգտագործելով աշխատանքային կենտրոնները և կազմակերպելով փոքր խմբերով աշխատանք:

Նման պարապմունքները հնարավորություն են ստեղծում ճանաչողական գործընթացը դարձնել իրական փորձառություն, որն օգնում է յուրաքանչյուր երեխային լիարժեք բացահայտել իր ստեղծագործական կարողությունները, բավարարել հետաքրքրությունները:

Պարապմունքների ժամանակ երեխաները հետազոտում են, ուսումնասիրում, պրպտում, լուծումներ գտնում, որոշումներ կայացնում: Նրանք սովորում են ոչ միայն դաստիարակին լսելով, այլ նաև սեփական փորձով, ընկերների հետ քննարկելով, պարապմունքին մասնակցող այլ մեծահասակների հետ շփվելով:

Պլանավորված պարապմունքներն իրականացվել են խմբերով՝ կախված ուսուցանվող նյութի բովանդակությունից, թեմաների նպատակներից, երեխաների նախապատրաստվածության մակարդակից և հոգեբանական առանձնահատություններից, ծնողների պահանջներից:

Պարապմունքի ընթացքը: Երեխաների հետ մեր կատարած աշխատանքը ցույց է տալիս, որ նրանք առավել մեծ հետաքրքրություն են ցուցաբերում ֆիզկուլտուրայի պարապմունքներին: Ֆիզիկական դաստիարակությունը նպատակաուղղված է երեխաների առողջության պահպանմանն ու ամրապնդմանը, նրանց շարժողական կարողությունների և հմտությունների ձևավորմանը, ուստի դաստիարակի և ֆիզիրահանգիչի համագործակցային աշխատանքին առանձնահատուկ դեր է վերապահվում:

Այդ նկատառումով էլ ֆիզիրահանգիչի հետ համագործակցության շրջանակում «Ծանոթացում շրջապատին» առարկայի ինտեգրված եղանակով ուսուցումը համադրել ենք ֆիզիկական դաստիարակության հետ՝ փորձելով ստեղծել միջառարկայական կապի նպատակային տարբերակ և այդ հիմքի վրա իրականացնել ինտեգրված օրինակելի պարապմունք: Պարապմունքի ընթացքում երեխաների ակտիվ շարժունակության և բարձր աշխատունակության ապահովման համար կարևոր է, որ դաստիարակը նախապես ճիշտ պլանավորի գործունեության առանձին տեսակների և հանգստի հերթագայումը:

Ստորև ներկայացնում ենք ֆիզիկական դաստիարակության հետ ինտեգրված եղանակով կազմակերպված «Ծանոթացում շրջապատին» առարկայի ինտեգրված պարապմունքի պլանը.

Պարապմունքի պլան

Պարապմունք	Խումբ	Թեմա	Տևողություն
Ինտեգրված	Միջին	Ճանապարհորդություն	30-35 րոպե

օրինակելի Ծանոթացում շրջապատին և ֆիզկուլտուրա		դեպի կենդանաբանական այգի	
Նպատակը	• Վայրի և ընտանի կենդանիների (թռչունների) մասին գիտելիքների ամրապնդում, • Կենդանիների (թռչունների) վարքագծին բնորոշ շարժումների նմանակում, • Վայրի և ընտանի կենդանիների (թռչունների) ըստ ապրելավայրի խմբավորելու կարողության ձևավորում		
Նյութեր	• Անտառի և գյուղական բնակավայրի գունազարդ պաստառներ, • Ընտանի և վայրի կենդանիների (թռչունների) նկարներ, • Սպորտային գորգ, տափակ օղակ, թեք տախտակ, գնդակ:		
Մեթոդները	• Ինտերակտիվ		
Խթանման փուլ	Ընթացքը Հարցերի միջոցով թվարկել կենդանաբանական այգում բնակվող կենդանիները, դրանց անվանել ընդհանրաց-նող բառով: Հրավիրել ֆիզիրահանգիչին կատարելու կենդանիներին (թռչունների) նմանակող նախավարժանք:		
Իմաստի ընկալման փուլ	Ֆիզիկական արգելքները հաղթահարելու միջոցով ընտանի և վայրի կենդանիներին խմբավորել և տեղավորել իրենց բնակատեղում: Մրցակցային խաղի կազմակերպում:		
Կշռադատման փուլ	Շրջանաձև նստել գորգին և «Ինչպիսի ձայներ են արձակում կենդանիները», «Անվանիր կենդանիների ձայները», «Անվանիր կենդանիների ձագուկներին»		

	դիդակտիկ խաղերի միջոցով պարզել յուրացված գիտելիքները: Կատարել ինտեգրված պարապմունքի վերջնարդյունքների ամփոփում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ վերլուծելով նախադպրոցական ուսումնական հաստատություններում ինտեգրված ուսուցման, պարապմունքների կազմակերպման և իրականացման ձևերն ու եղանակները, հանգել ենք հետևյալ եզրակացությունների.

- Ինտեգրված պարապմունքները կարելի է կազմակերպել մանկապարտեզի բոլոր տարիքային խմբերում: Նման պարապմունքները պահանջում են և՛ դաստիարակի, և՛ երեխաների նախապատրաստում:
- Ինտեգրված պարապմունքները պարտադիր պետք է ունենան թեմատիկ բովանդակություն, ընդորում, ընտրված թեման հիմք է հանդիսանում գործունեության տարբեր ձևերի մեկտեղմանը, հետևաբար այդ պարապմուքները ենթադրում են տարբեր առարկաներից գիտելիքների փոխանցում:
- Կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում ինտեգրված պարապմունքները ուսուցման հուսալի եղանակ են հանդիսանում տարբեր առարկաների միջև կապ տեսնելու և այդ կապը գործնականում օգտագործելու կարողությունների ու հմտությունների զարգացման գործընթցում:
- Ինտեգրված պարապմունքներում դժվար է որոշել հիմնական նպատակը, քանի որ այն կրում է ինտեգրված բնույթ: Երեխան թեմայի հիմանական գաղափարը դիտարկում է տարբեր կողմերից՝ ճանաչողական, խոսքային, գեղարվեստական և, բացահայտում երևույթի հիմնական հատկանիշներն ու առանձնահատկությունները՝ ձեռք բերելով նոր գիտելիքներ:
- Ինտեգրված պարապմունքն արդյունավետ անցկացնելու կարևոր նախապայմաններից մեկը պարապմունքի ճիշտ պլանավորումն է, որը պետք է ներառի նաև գնահատման համակարգը:
- Ուսուցման ինտեգրված մոտեցումը համապատասխանում է նախադպրոցական դիդակտիկայի հիմնական պահանջներին, այն է՝ կրթությունը պետք է լինի փաքրածավալ, բայց տարողունակ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Краевский В. В. Методология педагогики: Пособие для педагогов-исследователей. -Чебоксары: Изд-во Чуваш, ун-та, 2001. – 244 с.
2. Талызина Н. Ф. Педагогическая психология, М.: Издательский центр «Академия», 1998. - 288 с.
3. Федорец, Г.Ф. Межпредметные связи в процессе обучения : учебное пособие, Ленинградский государственный педагогический институт им. А.И. Герцена, 1983. – 88 с.
4. Гогоберидзе А. Г. Солнцева О. В. Дошкольная педагогика сосновами методики воспитания и обучения, СПб, 2013, - 464 с.
5. Միտոյան Հ. Սմբատյան Լ. Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի միջին խմբի համար, Երևան, 2010,